

Համար, մանաւանդ որ շատ քիչ է այժմ փորձառու, բարձրատիման եկեղեցականներ լինելը:

Առաւօրեայ՝ Տէր զհոգի հանդուցեոյն, Ամէն:

ՏԱԺԿԱՆՆԵՐ

— Խառն ժողովը եր վերջին նախն մէջ կարգացեր է Սոյ Տեղապահ Տ. Կիրակոս եպիսկոպոսի մէկ զիրը, որով կը ծանուցանէ թէ միարան չընտ վարդապետը Հալէպի տեղապահ Նշանակած է, ժողովը որոշեր է մէկ քանի տեղեկութիւններ ստանալ, Տեղապահին այս առթիւ գրած նամակին մէկ քանի կէտերուն նկատմամբ, Սոյ Տեղապահը նշանակէ հաղորդած էր Պատրիարքարան թէ Յակոբ վարդապետը Կիւրինի տեղապահ Նշանակած է: Բայց տեղացիները իրենց նորընտիր տեղապահէն զժգոհութիւն յայտնած ըլլալով, Խառն ժողովը որոշմամբ այս պարագան Տ. Կիրակոս եպիսկոպոսի ուշադրութեան պիտի յանձնուի, ըստ այնմ հարկ եղածը գործադրուելու համար:

— Աղջային Հիւանդանոցի պատասպօրելոց հացկերոյթ տուեցաւ Գէորգ էֆ. Տէմիրճեանի փափաքին համեմատ, որ իր որդւոյն ամուսնութեան առթիւ 1200 շրուշ նուիրած է նոյն հաստատութեան:

— Վանայ առաջն. տեղապահ Ծ. Ա. տեղեկագրով մը վանքերու ցուցակը դրկած էր Պատրիարքարան խնդրելով որ բացառիկ կերպով վիճակին մէջ Վանօրէից Խորհուրդ մը կազմուի, հրահելու համար վանքերու վրայ, և առանձին վանահայր, միարանութիւն ու հոգաբարձութիւն ունենայ, ժողովը յետ խորհրդակցութեան որոշեց գրել տեղապահին թէ քանի որ իւրաքանչիւր վանք ունի իր առանձին հոգաբարձութիւնը, հետեւաբար Վանական ժողովը պէտք չկայ, միայն հոգաբարձութիւն չունեցող վանքերու համար պէտք է այդ մարմինը կազմել և կամ ուրիշ միջոցաւ կարգադրել:

— Նպաստից Եանձնաժողովն ալ գումարուեցաւ երէկ Ս. Պատրիարքին նախագահութեամբ, Եանձնաժողովը յառաջիկայ տօներուն առթիւ իր նիստերը զադարեցնելէ առաջ, պէտք տեսաւ մէյմէկ նպաստ զրկել կարօտեալներու և մանաւորապէս բանտարկեալներու, ինչպէս արդէն սովորութիւն եղած է, Գոհացուցիչ է, որ յանձնաժողովը իր այս նիստին մէջ նկատողութեան առնելով քաւառական նպաստը նկատ վարժարաններու վիճակը, անոնց բարեկարգութեան և կանոնաւորութեան համար խորհրդակցեր և որոշեր է այս մասին հրա-

հանգներ հաղորդել նոյն հոգաբարձութիւններուն: 26-ը զիտեր թէ հաղորդուած հրահանգները ինչ են, բայց կըստանալ, որ հրատարակուին անոնք աւելի որոշ հասկըցուելու համար, թէ որքան կրնան նպաստել բաղձացեալ բարեօրումը առաջ բերելու: Եանձնաժողովը Շապին Գարահիսարի մէջ մէկ քանի զպրոցներու բացման համար 2 ոսկւոյ նպաստ մը յատկացուցեր և կէս ոսկի ալ Զերմիկի զպրոցին բացման համար տալ որոշեր է:

— Եզիպտոսի Առաջնորդ Ալփազեան եպիսկոպոս Աղեքսանդրիա հասեր և շքեղ ընդունուելութիւն մը գտեր է տեղւոյն Հայ հասարակութեան և աղջ. պաշտօնական մարմիններու կողմէ:

— Աննեակի Միթիթարեանները հազար ֆրանք դրկեր են Պատրիարքարան, ի նպաստ որոց և կարօտելոց:

— Իզմիրլեան կտակի մնայուն Եանձնաժողովը՝ առջի օրը մեծամասնութեամբ Բերա Ս. Պատրիարքին բնակարանին մէջ իր նիստը կազմեց ն. Ամենապատուութեան նախագահութեան տակ, Ի մէջ այլոց, Վալաթիոյ Կեդրոնական Մատենադարանի խնդրոյն շուրջը լրագրաց մէջ տեսնուած քննադատութիւնները ու առաջարկները նկատողութեան առնելով՝ որոշեց իր յանձնաժողովոյն մէջէն երկու հոգի ընտրել, որպէս զի ասոնք նախապէս նոյն մատենադարանին մէջ գտնուած ձեռագիր ու տպագիր մատենաները ցուցակադրեն: Սոյն ցուցակադրողներէն մէկը՝ Տ. Եղիշաննէս աւագ-քահանայ Մկրտանը ընտրուած է, որուն այս տեսակ գործի մը համար ունեցած յարմարութիւնն ու փորձառութիւնը արդէն յայտնի են գրասիրաց:

— Ենկիւրիի նորընտիր տեղապահ Ներկարարեան Պետրոս վարդապետ և Ռոտոսթոյի նորընտիր տեղապահ Եակոբեան Վահան վարդապետ այսօր կը մեկնին իրենց պաշտօնատեղիները:

— Կաթողիկ-Ասորիներու պատրիարք Տ. Ապտիւլ Մանճ՝ որ մայրաքաղաք կը գտնուի, փոխադարձ այցելութեան եկաւ Աղջ. Պատրիարքարան: Ս. Պատրիարքը բացակայ ըլլալով, Ասորի Պատրիարքը ընդունուեցաւ Փոստնորդ Սրբազանին, Նիկոմիդիոյ Առաջնորդին և Պատրիարքարանի Ա. Գործակատար էֆէնտին կողմէ:

— Բաղմարգին ուսուցիչ Սարբեան Մկրտիչ էֆ. ի հիւանդութեան նկատմամբ մեր երեկուան թիւին մէջ հրատարակուած տեղեկութենէն յետոյ Զմիւռնիայէն նամակ մը առինք, որուն մէջ ցաւք կը կարդանք թէ Սարբեան էֆ. ի վիճակը գործնալ ծանրացեր է, ձախ ձեռքին և ոտքին իջած կաթուածին հետեւեալ, Սարբեան էֆ. ի կիներ ու մէկ աղջիկն ալ հիւանդ են այս միջոցին, և ուրիշ չորս զաւակներ ծնողական հոգածութեան և խնամոց կը կարօտին: Ս. Պատրիարքը հեռագրաւ Սարբեան էֆ. ի բժշկական տեղեկագիրը պահանջած է, Ա-

առջնորդ Տ. Մեւքիսեղեկ Սրբազանի կարգադրութեամբ մէկ քանի կրթասէր անձերու գիտում ըլլալով, անմիջապէս 10 ոսկի նպաստ մը յանձնուեր է Սարըեան էֆէնի և կը յուսացուի որ ուրիշ նպաստողներ ալ պիտի ըլլան որովհետեւ Սարըեան էֆէնտի Զմիւռնիոյ մէջ ունեցած կարճ պաշտօնավարութեանը միջոցին նոր ապացոյց մը տուաւ թէ ինք կրթութեան անձնուէր ուսուցիչ մըն է:

— Առկէ երկու ամիս առաջ Թէհրանի հայերը հիմը դրին երկրորդ ազգ. երկեսո նախակրթարանի մը: Տէօպէթայ թաղին մէջ, նախագահութեամբ Բագարատ Ա. ին. Այս վարժարանը ընդարձակ սրահ մը պիտի ունենայ, պէտք եղած տեսն թատրոնի վերածուելու համար: Էյնութեան մասնախումբը կը կազմեն Մարտիրոս Խան Դաւիթեանեանց, Պ. Ալիքսան Թուռեանց և ուրիշներ՝ տեսնապետութեամբ Յովհաննէս Խան Մասեհեանցի, Առայժմ 3000 թուման ծախսել որոշուած է, որուն 2000-ը արդէն ստորագրուած և ծախսուած է:

— Էլմիսանի Ս. Հայրապետը՝ 300 ոսկի զըրկեր է Պատրիարքարան, որ հանգանակուած է Պաքուի և այլ քաղաքացի մէջ, ի նպաստ կարօտելոց, նորին Ս. Օծութիւնն, այս առթիւ Պատրիարքարանէ ուզեր է նպաստից Սնտուկին ընդհանուր հաշիւն:

ՄԱՏԵՆԱԹՕՍՈՒԹԻՒՆ

Փարիզում հրատարակուել է իշխան Գուխոն Լուսինեանի ֆրանսահայ ընդարձակ պատկերազարդ բառագրքի Ա. հատորը, որը բաղկացած է ԺԴ—1061 եռասիւն էջերից և պարունակում է Ա—Մ տառերը: Այն նշխատութիւնը մինչև այժմ հրատարակուած ֆրանսահայ բառարանների մէջ ամենից ընդարձակն է. մենք համեմատելով մի քանի էջ նորայրի բառարանի հետ, տեսանք թէ Լուսինեան բառգրքին անհամեմատ աւելի ծով է քան նորայրինը: Օրինակի համար. նորայր էջ 239, բ սիւնակ (Chipie—Chlorhydrigue) ունի 27 բառ, իսկ Լուսինեան ունի 224 բառ. նորայր էջ 461, բ սիւնակ (énéide—enfant) 14 բառ, Լուսինեան 22 բառ. նորայր էջ 83, բ սիւնակ (architrésorier—ardent) ունի 17 բառ, Լուսինեան 70 բառ. բացի

այս փոփոխութիւնից Լուսինեանի բառագրքը նաեւ զարգարուած է 1246 պատկերներով, որոնցից 427-ը բոյսերի, 423-ը կենդանիների, իսկ ֆանցեալ 396-ը այլ և այլ զործկերների անային առարկաների և ին. պատկերներ:

Բառագրքի սոյն Ա. հատորի գինն է 25 ֆրանք—10 ուսրլի (թղթակազմ), երկրորդ և փերջին հատորը, որ դեռ մամուլի տակ է, արժեւում է նոյնպէս 25 ֆրանք:

ԸՆԴԱՐՁԱԿ ԹՐԱՅՈՅՑ ԱՂԵՅԻՆ ԷԼԵՄԵՆՏԱՐԻ.

Տոմար, զանազան գիտելիքների, փիլիսոփայական տեղեկութիւնների.

Կ. Պոլիս, տպագրութիւն Յ. Մատթէոսեան, գինն է 10 դրուշ:

Կ. Պոլսի աղգային հիւանդանոցի ընդարձակ օրացոյցի հրատարակութիւնն սկսուած է անցեալ տարուանից, բայց այս տարի աւելի կատարելութեան է հասցրած: Անունը օրացոյց է, բայց իսկապէս 450 երեսից բաղկացած բանասիրական և ուրիշ կարեւոր տեղեկութիւններով լի մի ժողովածու է: Բաւական է միայն օրացոյցի մի քանի հատուածի բովանդակութիւնը յիշենք, որ ընթերցողները զազափար ստանան այդ հրատարակութեան մասին: Բուն օրացոյցին հետեւում է «եկեղեցական, զպրոցական, բարեգործական, զբական, գիտական և արուեստագիտական թուանշաններ» վերնագրով հատուածը, ուր ամիսի տեղեկութիւններ կան յայտնուած վերնագրի համաձայն զանազան անձնաւորութիւնների և հաստատութիւնների մասին, որ հեշտ չէ, նոյն իսկ բանասէր անձի համար հարկաւոր ժամանակ իսկոյն գտնել:

Այս թուակարգութեան կցուած է յատուկ անունների մի ցանկ, որով շատ դիւրատում է ցանկացած թուականները գտնելու 40—76 եր. Կ. Պոլսի Հայերը և իրենց պատրիարքները, վերնագրով հատուածը, թէև համառօտ, բայց շատ շահեկան ուսումնասիրութիւն է Կ. Պոլսոյ պատրիարքների ժամանակագրութեան համար: Որքան մեզ յայտնի է, այս առաջին աշխատութիւնն է Կ. Պոլսոյ պատրիարքութեան մասին ուստի նորա հեղինակը՝ Հրանտ Ասատուր, որ և ամբողջի իմրագիրն է, արժանի է ամենայն շնորհակալութեան: